ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հուլիս)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 113.1%, 2021թ. հունվար-հուլիսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.2%, իսկ 2020թ. հունվար-հուլիսին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 94.3%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հուլիսին կազմել է 1 տրիլիոն 409 մլրդ 771.8 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 184 և 349.6 մլրդ դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հուլիսին կազմել է 190 մլրդ 552.7 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 30 և 53 մլրդ դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հուլիսին կազմել է 2 տրլ 204 մլրդ 944.9 մլն.դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 433.2 և 687.2 մլրդ դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հուլիսին կազմել է 1 տրլ 362 մլրդ 732.9 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 336.2 և 394 մլրդ դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 107%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.1%-ի և 101.3%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 113.6%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.8%-ի և 77.4%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 112.5%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.5%-ի և 89.0%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 127.5%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.5%-ի և 89.0%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հուլիսին կազմել է 330 մլրդ 890 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 16.8 մլրդ, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 119.9 մրդ դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հուլիսին կազմել է 871 մլրդ 364,9 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 165.7 և 181 մլրդ դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-հուլիսին կազմել է 192 մլրդ 225,5 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 32.9 և 45.4 մլրդ դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հուլիսին կազմել է 15 մլրդ 291.4 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 2 մլրդ 303 մլն և 3 մլրդ 222.6 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 90.9%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.3%-ի և 120.9%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 116.4%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 98.9%-ի և 96.4%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարի-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 100.6%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.1%-ի և 102.2%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 107.5%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.2%-ի և 81.2%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հուլիսին կազմել է 146 մլրդ 673.7 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 5.5 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 70.6 մլրդ դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հուլիսին կազմել է 231 մլրդ 439.6 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 52.6 և 71.8 մլրդ դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հուլիսին կազմել է 416 մլրդ 603,1 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 144.5 և 149 մլրդ դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 107.0%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 64.7%-ի և 96.9%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 129.5%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 112.8%-ի և 106.5%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 143.6%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.6%-ի և 110.7%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2022թ. հունվար-հուլիսին 2021թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 108.3%, 2021թ. հունվար-հուլիսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.1%, 2020թ. հունվար-հուլիսին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.7%: ՍԳԻ-ն 2022թ. հուլիսին 2021թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 104.9%, 2021թ. հուլիսին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 103.3%, 2020թ. հուլիսին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 98.9%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2022թ. հուլիսի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 107 մլրդ 826 մլն դրամ, ինչը 100.3 մլրդ դրամով կամ 8.3%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 130.8 մլրդ դրամով կամ 13.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2022թ. հուլիսի դրությամբ կազմել է 77268 մարդ, ինչը 13072 մարդով կամ 14.5%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 10928 մարդով կամ 12.4%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2022թ. հուլիսի դրությամբ կազմել է 52618 մարդ, ինչը 8648 մարդով կամ 14.1%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7508 մարդով կամ 12.5%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդի/հավելուրդի ֆինանսավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2022թ. հունվար-հուլիսին կազմել է 6 մլրդ 357.7 մլն դոլար, ինչը 2 մլրդ 53.3 մլն դոլարով կամ 47.7%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2 մլրդ 614.8 մլն դոլարով կամ 69.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2022թ. հունվար-հուլիսին կազմել է -1,639.9 մլն դոլար, ինչը 614.7 մլն դոլարով կամ 60%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 562.6 մլն դոլարով կամ 52.2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2022թ. հունվար-հուլիսին կազմել է 2 մլրդ 358.9 մլն դոլար, ինչը 719.3 մլն դոլարով կամ 43.9%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 41 մլրդ 26.1 մլն դոլարով կամ 77%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2022թ. հունվար-հուլիսին կազմել է 3 մլրդ 998.8 մլն դոլար, ինչը 1 մլրդ 334 մլն դոլարով կամ 50.1%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 588.7 մլն դոլարով կամ 65.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2022թ. հունվար-հուլիսին կազմել է 221683 դրամ, ինչը 23802 դրամով կամ 12%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 35283 դրամով կամ 18.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2022թ. հունվար-հուլիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 61 մլրդ 959.4 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 46 մլրդ 674.3 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -108 մլրդ 633.7 մլն դրամ: 2021թ. հունվար-հուլիսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 131 մլրդ 459.7 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -132 մլրդ 749.6 մլն և 264 մլրդ 209.3 մլն դրամ: 2020թ. հունվար-հուլիսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 104 մլրդ 880.4 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 59 մլրդ 706.1 մլն և 45 մլրդ 174.3 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ